ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ԱՐՄԵՆ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Քոչարյան,

ի պատասխան Ձեր 19.03.2026թ. հ. 64-2026թ. գրության՝ տեղեկացվում է.

Ավան վարչական շրջանի Նարեկացի թաղամաս հ.34, Նարեկացի թաղամաս հ. 54, Սայաթ-Նովա թաղամաս հ. 8/1 վերելակների փոխարինման աշխատանքները ներառված են արդեն իսկ հայտարարված ԵՔ-ԲՄԱՊՁԲ-26/2 ծածկագրով մրցույթում, որի հայտերի բացումը տեղի կունենա 01.04.2026 թվականին, իսկ Սայաթ-Նովա թաղամասի հ. 3 շենքի վերելակը ներառված է ԵՔ-ԲՄԱՊՁԲ-26/2 ծածկագրով մրցույթում, հայտերը բացվել են և ընթացքի մեջ է մասնակիցների հայտերի գնահատումը:

Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացվող բազմաբնակարան շենքերի հին վերելակները նորով փոխարինման ծրագրի ցուցակում ընդգրկված հասցեների ընտրությունը վերապահված է վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերին և մյուս հասցեների փոխարինման հարցը կքննարկվի լրացուցիչ ծրագրեր իրականացնելու ժամանակ Ավան վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմից համապատասխան հայտ ստանալու դեպքում:

Ավան-Առինջ թաղամասի 2-րդ մկշ. թիվ 1/14 շենքի վերելակը փոխարինվել է 2024 թվականին:

Ավան վարչական շրջանում չկա գեթ մեկ վերելակ, որը շուրջ մեկ ամիս չշահագործվի, խափանումից հետո տվյալ համատիրության կողմից իրականացվում են անհրաժեշտ աշխատանքներ վերելակները սեղմ ժամկետում շահագործելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ